ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » մայիս 2025թ. No 2772 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 66-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2084-25 առ 02.05.2025թ. գրությունը և ռեֆերենտ երկրների փորձագիտական եզրակացությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու (ԵԱՏՄ գրանցման փոխադարձ ճանաչում) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 8 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի

32-րդ ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 76-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված գրանցված Տրոմբոպոլ Պոլֆարմա դեղահատեր աղելույծ 75մգ (N 19359), Տրոմբոպոլ Պոլֆարմա դեղահատեր աղելույծ 150մգ (N 19360), Տրիբեստան դեղահատեր թաղանթապատ (N 19322), ԱՄԻՈԴԱՐՈՆ կաթիլաներարկման լուծույթի խտանյութ (N 19735), Պանցեֆ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի (N 20954), Ազարգա ակնակաթիլներ (N 21670) դեղերի գրանցման հավաստագրերը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի  մայիսի «06 » - ի N 2772- Ա հրամանի

## Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տրոմբոպոլ Պոլֆարմա | ացետիլսալիցիլաթթու | դեղահատեր աղելույծ | 75մգ; (30/3x10/) բլիստերում, (50/5x10) բլիստերում, (60/6x10/) բլիստերում | Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելպլինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի | Լեհաստան | Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելպլինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի | Լեհաստան | ԱԴ | 23002 (002328) 30.04.2025 |
| 2 | Տրոմբոպոլ Պոլֆարմա | ացետիլսալիցիլաթթու | դեղահատեր աղելույծ | 150մգ; (30/3x10/) բլիստերում, (50/5x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում | Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելպլինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի | Լեհաստան | Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելպլինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի | Լեհաստան | ԱԴ | 23003 (002328) 30.04.2025 |
| 3 | Տրիբեստան | տատաշ փռվող խոտի չոր հանուկ | դեղահատեր թաղանթապատ | 250մգ; (60/6x10/) բլիստերում, (180/18x10/) բլիստերում | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա | Բուլղարիա | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա | Բուլղարիա | ԱԴ | 23004 (011496) 30.04.2025 |
| 4 | ԱՄԻՈԴԱՐՈՆ | ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) | խտանյութ կաթիլաներարկման լուծույթի | 50մգ/մլ; (10) ամպուլներ 3մլ պիտակ բանդերոլ, (10) ամպուլներ 3մլ դիվիդելլա, (10) ամպուլներ 3մլ կամա | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, No10/1, Չապաեվ փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան | Բելառուսի Հանրապետություն | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Չապաեվ փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան | Բելառուսի Հանրապետություն | Դ | 23005 (011474) 30.04.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Հեպարին քսուք | հեպարին (հեպարին նատրիում), բենզոկային, բենզիլ նիկոտինատ | քսուք արտաքին կիրառման | 100ՄՄ/գ+40մգ/գ+0,8մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ, 25գ լամինապատ պարկուճ | Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, մասնաշենք 1- բաց թողնման հսկող, Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | Դ | 23006 (007666) 30.04.2025 |
| 6 | Վաբիսմո | ֆարիցիմաբ | լուծույթ ներակնային ներարկման | 120մգ/մլ; ապակե սրվակ և ֆիլտրով ասեղ | Ֆ. Հոֆման-Լա Ռոշ ՍՊԸ, Վուրմիսվեգ, 4303 Կայզերաուգստ | Շվեյցարիա | Ֆ. Հոֆման-Լա Ռոշ ՍՊԸ, Գրենզախերշտրասե 124, 4070 Բազել | Շվեյցարիա | Դ | 23007 (002181) 30.04.2025 |
| 7 | Պանցեֆ | ցեֆիքսիմ (ցեֆիքսիմի տրիհիդրատ) | դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի | 100մգ/5մլ; 53գ դեղափոշի 100մլ ապակե շշիկում, 32գ դեղափոշի 60մլ ապակե շշիկում և 5մլ չափիչ գդալ | Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000 Սկոպյե- որակի և բաց թողնման հսկող, Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Պարտիզանսկի օդրեդի 98Ա, 1000 Սկոպյե, Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն- բալք արտադրող, փաթեթավորող | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Դ | 23008 (000662) 30.04.2025 |
| 8 | ԱԶԱՐԳԱ | թիմոլոլ (թիմոլոլի մալեատ), բրինզոլամիդ | ակնակաթիլներ (դեղակախույթ) | 5մգ/մլ+10մգ/մլ; 5մլ պլաստիկե սրվակ-կաթոցիկ | Ս.Ա. Ալկոն-Կուվրոր Ն.Վ., Ռիջկսվեգ 14 2870 Պյուրս | Բելգիա | Նովարտիս Ֆարմա ԱԳ, Լիխտշտրասե 35, 4056 Բազել | Շվեյցարիա | Դ | 23009 (009342) 30.04.2025 |